14 հուլիսի 2020թ. ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 419117/16
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 14.07.2020 թվականի թիվ _____ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ 18640 վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

<<Մուլտի Ուելնես>> կենտրոն ՍՊԸ-ի /ՀՎՀՀ՝ 02669617/ տնօրեն Իշխան Սեդրակյանը /հասցե՝ ք. Երևան, Նորք Մարաշ, Ալ. Մանուկյան, 2. թիվ 11, ՀԾՀ՝ 2709830310/ «ՀՀ և ԵՏՄ անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 04.04.2020թ-ին կատարված ներմուծման վերաբերյալ ներմուծման հարկային հայտարարագիրը և հայտարարությունը, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով:

Պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին, կողմը ներակայացրել է դիմում այն մասին, որ 16.03.2020թ-ից մինչև 31.05.2020թ-ը գործունեություն չի իրականացրել և տրանսպորտային ընկերությունից ներմուծման փաստաթղթերը ստացվել են էլեկտրոնային, որի հետևանքով ոչ իրենց մեղքով 04.04.2020թ-ի ներմուծման փաստաթղթերի մասին տեղեկատվություն չեն ունեցել՝ անհրաժեշտ հայտարարագիր և հայտարարությունը ներկայացնելու համար, ուստի խնդրել է վարչական տուգանք չկիրառել:

Վերոգրյալի կապակցությամբ վերջինս հիմնավոր փաստաթուղթ չի ներկայացրել, միաժամանակ Հարկային օրենսգրքի 77 հոդվածի 1-ին կետի համաձայն ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման դեպքում հարկ վճարողը պարտավոր է մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիրը և հայտարարությունը, մինչդեռ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգում առկա տվյալների համաձայն Իշխան Սեդրակյանի կողմից 04.04.2020թ-ին կատարված ներմուծման վերաբերյալ ներմուծման հարկային

հայտարարագիրը և հայտարարությունը ներկայացրել է 25.06.2020թ-ին՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետից ուշ, ուստի կողմի նշած փաստը որպես վարչական պատասխանատվությունից ազատելու հիմք նախատեսված չէ օրենքով:

Այն փաստը, որ Իշխան Սեդրակյանի կողմից մեկ տարվա ընթացքում կրկին կատարվել է իրավախախտում, որի համար արդեն ենթարկվել է վարչական տույժի (13.09.2019թ. թիվ 000275/21 որոշում), սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34, 244[2], 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի՝ Իշխան Սեդրակյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 20.000 (քսան հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝ Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարներին.
900005240487 վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:
Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով: